

Հաշվետվություն

Տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչության համայնքային տեղեկատվական հոսքերի կառավարման բաժնի փորձագետ Սմբատ Ղահրամանյանի կողմից 2020թ. հուլիսի 1-ից մինչև հոկտեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում կատարած աշխատանքների վերաբերյալ

1. Ճշգրտել ու թարմացրել եմ CatIS պետական տեղեկատվական համակարգերի Փոխգործելիության լուծումների կատալոգում ՏԿԵՆ մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների և նախարարությանը ենթակա մարմինների վերաբերյալ առկա տեղեկատվությունը:

2. Պետական տեղեկատվական համակարգում իրականացրել եմ համայնքների ներկայացվածության ընդլայնման և ՏԻՄ-երի կողմից կիրառվող էլեկտրոնային համակարգերի՝ պետական մարմինների նմանատիպ համակարգերի հետ փոխգործելիության կազմակերպման աշխատանքներ:

3. Գյուղական բնակավայրերի կողմից տնային տնտեսությունների հաշվառման գրքերի վարման վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրել, ամփոփել և ըստ հայցվող պահանջի ներկայացրել եմ ՀՀ վիճակագրական կոմիտե:

4. Միավորված համայնքներում հանրային ծառայությունների գնահատում/անասնաբուժական, միջբնակավայրային տրանսպորտի և համայնքային գույքի կառավարման ոլորտում մատուցվող ծառայությունների առկա իրավիճակի վերաբերյալ տեղեկատվությունը ամփոփել և վերլուծել եմ:

5. Կազմել և համայնքներին եմ ուղարկել «18 խոշորացված համայնքներում տնտեսական զարգացման պլանների մշակում» միջոցառման հարցաթերթը:

6. Մասնակցել եմ «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի ապրիլի 9-ի թիվ 362-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման նախագծի կազմմանը, հատկապես աշխատել եմ հիմնավորումներ բերելու ուղղությամբ:

7. «Համայնքային էլեկտրոնային կառավարման միասնական հարթակի (www.e-community.am) օպերատոր ճանաչելու և նրան գործառույթներ վերապահելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վրա գործուն աշխատանք եմ տարել:

8. 362-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման նախագիծը շրջանառել եմ շահագրգիռ մարմինների միջև և լիազոր մարմին՝ ներկայացրել եմ կարծիքի:

9. Հետևել եմ համացանցային պաշտոնական կայքերի տեղեկատվության ամբողջացմանը և թարմացմանը, իրականացրել եմ վերահսկողություն և համակարգում:

10. Ամփոփել եմ ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում իրականացված հսկողության արդյունքները:

11. ՀԿՏՀ շահագործող, չշահագործող և կամ ունեցող բայց չշահագործող համայնքների վերաբերյալ տեղեկատվությունը ամբողջացրել և ամփոփել եմ:


12. ՀՀ համայնքներից Ինտեգրված կադաստրի գեոպորտալում պահանջվող տեղեկատվությունը հավաքագրել և ամփոփել եմ:

13. ՏԻՄ-երի գործառույթներին առնչվող երկրատարածական տվյալները հավաքագրել և ամփոփել եմ:

14. Պետական մարմինների գործառույթներ իրականացնող քաղաքացիների սպասարկման գրասենյակների աշխատակիցների վերաբերյալ տեղեկատվությունը ճշգրտել և նրանց վերապատրաստման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրել եմ Արդարադատության նախարարությանը:

15. Համայնքային տարեկան աշխատանքային պլանների (ՏԱՊ)-երի կազման վերաբերյալ աշխատանքների իրականացման ուղղությամբ տեղեկատվությունը ամփոփել եմ:

16. Կառավարության ծրագրից բխող միջոցառումների ցանկում ՏԻՔ վարչության, մասնավորապես համայնքային տեղեկատվական հոսքերի կառավարման բաժնի մասով փոփոխություններ և լրացումներ եմ մուտքագրել:

ՏԻՔ վարչության համայնքային տեղեկատվական
հոսքերի կառավարման բաժնի փորձագետ  Ս. Ղահրամանյան

ՏԻՔ վարչության համայնքային տեղեկատվական
հոսքերի կառավարման բաժնի պետ  Գ. Մանուկյան

Վերջապահելով Ա. Ղահրամանյանի կողմից կատարված
աշխատանքները գնահատում եմ զերապակց:

